Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ ԹԻՎ 22-Ն ԵՎ 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 22-Ն որոշման համարակալումը սխալ է գրառված:

Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում կատարված փոփոխությունը թերի է, այսինքն՝ «5474300» թվից հետո լրացնել «հինգ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր» բառերը: Բացի այդ, որոշման վերջին կետը չի համապատասխանում որոշման վերնագրին:

Թիվ 23-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին կատարված հղումը թերի է: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի՝ օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը չի համապատասխանում որոշման վերնագրին և գրառված է կիսատ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
21.05.2020թ.